*Օգնի՛ր ինձ. ես*

# ՀՈՒՍԱԽԱԲՎԱԾ ԵՄ

**Հաղթահարել զգացմունքային պատերազմները**
**Աստծո Խոսքի զորությամբ**

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Ջոյս Մայեր
Օգնի՛ր ինձ. ես հուսախաբված եմ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ծանոթություն* ................................................ *5*

**Մաս 1**

*Ազատ լինել հարսփահարումներից*

1. Ամենազորն ապրում է մեր մեջ .................. 9
2. Վեց բան, որ հաստատակամորեն պետք է անել.............................................25
3. Ինչպե՞ս վարվել հուսախաբության հետ....37
4. Վստահություն Հիսուսի նկատմամբ........ 49
5. Մտածի՛ր Աստծո գործերի մասին ............ 59
6. Նոր գինին, նոր տիկերը .........................81

Ամփոփում ................................................ 89

**Մաս 2**

*Սուրբգրային խոսքեր*

Սուրբգրային խոսքեր՝ հաղթահարելու հուսախաբությունը.................................... 93

Աղոթք՝ հուսախաբության դեմ պայքարելու համար............................ 97

Աղոթք՝ Աստծո հետ անձնական հաղորդակցման համար............................ 99

Հեղինակի մասին .........................................101

# ՆԱԽԱԲԱՆ

Բոլորս էլ ժամանակ առ ժամանակ հուսախաբվում ենք: Իրականում, զարմանալի կլիներ, եթե ամբողջ շաբաթվա ընթացքում հուսախաբության չբախվեինք: Մենք ցանկանում ենք (նախօրոք որոշակի ուղղության վրա հաստատվելով), որ ինչ-որ բան տեղի ունենա որոշակի ձևով, և երբ դա տեղի չի ունենում, հուսախաբվում ենք: Եթե հուսախաբությանը ճիշտ լուծում չի տրվում, դա հուսահատության է վերածվում: Եթե երկար ժամանակ հուսահատված ենք մնում, ապա ենթակա ենք ամայացման, և այդ ժամանակ անընդունակ ենք դառնում նախաձեռնելու կամ որևէ բան անելու:

Շատ քրիստոնյաներ կյանքում անկում են ապրել, որովհետև չեն իմացել, թե ինչպես վարվեն հուսահատության պահին:

Այն ամայությունը, որ նրանք ապրում են, շատ հավանական է, որ սկսվել է ճիշտ լուծում չստացած փոքր հուսահատությունից: Հիսուսը բժշկում էր նրանց, ովքեր սատա-

նայի կողմից հարստահարված էին (տե՛ս Գործք 10.38): Հուսահատված, ընկճված և ավերված կյանքով ապրելն Աստծո կամքը չէ: Երբ հուսահատվում ենք, պետք է սովորենք վերականգնվել, որպեսզի չհայտնվենք հուսախաբված վիճակում, իսկ հետո կործանվենք: Երբ սովորենք հուսալ ու վստահել Ժայռին՝ Հիսուսին (տե՛ս Ա Կորնթ. 10.4), և հակառակ կանգնենք սատանայի հարձակումներին, կարող ենք ապրել Տիրոջ ուրախությամբ և խաղաղությամբ և լինենք հուսախաբություններից ազատ:

# Մաս 1

# ԱԶԱՏ ԼԻՆԵԼ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

# 1

## ԱՄԵՆԱԶՈՐՆ ԱՊՐՈՒՄ Է ՄԵՐ ՄԵՋ

*«… Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով օծեց, որ ման եկավ՝ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով, որովհետև Աստված Նրա հետ էր»:*

*Գործք 10.38*

# 1

## Ամենազորն ապրում է մեր մեջ

Իր երկրային ծառայության ընթացքում Հիսուսը Սուրբ Հոգու օծությամբ ազատություն էր տալիս սատանայից բոլոր հարստահարվածներին: Այդ զորությունն առկա է նաև այսօր: Աստծո կամքը չէ, որ Իր զավակները հարստահարված կամ ընկճված լինեն, և Հիսուսի զորությունն այսօր ընդունակ է մեզ ազատելու հարստահարությունից:

Ըստ Վեբսթերի բառարանի՝ «ճնշել» նշանակում է «ծանրաբեռնել», մասնավորապես՝ «ճնշել միտքը կամ հոգին, ինչպես նաև ոչնչացնել կամ ցնցել, վայր գցել»: Ես հավատում եմ, որ թշնամին՝ սատանան, ոչ միայն կարող է ճնշել մեր միտքը և հոգին, այլ նաև՝ մեր մարմինն ու շունչը: Հաճախ չենք հասկանում, թե ինչն է այդքան անհանգստացնում մեզ:

Բոլորս էլ ինչ-որ ժամանակ ծանրության բեռն զգացել ենք մեզ վրա: Մեզնից շատերը

դժվարացել են այդ վիճակում մտածել կամ որոշումներ կայացնել: Հաճախ ֆիզիկապես ենք ընկճվել:

Մենք պետք է հիշենք, որ տարբեր ժամանակներում սատանան կփորձի այլևայլ նպատակների համար ճնշել մեզ տարբեր միջոցներով: Բայց մենք Հիսուսի միջոցով կարող ենք հաստատակամ դեմ կանգնել սատանային: Եթե հաստատակամ չլինենք, նա՛ հաստատակամ կլինի մեր հանդեպ:

Ինչևէ, սատանան է ամեն չարի սկզբնաղբյուրը, բայց կան բաներ, որ մենք ենք անում, և դրանք կարող են պատճառ դառնալ՝ մեզ ճնշված կամ ծանրության բեռի տակ զգալու: Մենք կճնշվենք, եթե ճիշտ լուծում չտանք առաջացող փոքր խնդիրներին: Նրանք, ովքեր բամբասում, բողոքում, չարախոսում և դատում են, կարող են ճնշվածության տակ ընկնել:

Նորոգվելու համար պետք է հակառակ կանգնենք սատանային և նրա բոլոր հնարքներին, որոնցով փորձում է ճնշել մեզ: Պետք է նաև զգոն լինենք, որ ինքներս մեզ վրա ճնշում և ընկճվածություն չբերենք: Եվ ամենակարևորը՝ պետք է հաստատակամորեն

անենք այն, ինչ Աստված է ասում: Տերը մեզ տալիս է Իր Հոգին՝ գործելու մեր մեջ զորավոր ձևով:

Ըստ Վեբսթերի՝ հաստատակամ լինելը համոզիչ գործողություններ նախաձեռնելն է, այսինքն՝ եռանդուն, համարձակ, հաստատակամ, նախաձեռնող լինելը:

Մարդու պատկերացումն ի սկզբանե չար նպատակի համար չի արարվել: Պատկերացման միջոցով ծագում են նոր մտքեր, որոնք թույլ են տալիս կատարել նորանոր վերափոխումներ: Մտածեք, թե բոլոր կենդանիներին անուններ դնելու համար որքան ստեղծագործող պետք է լիներ Ադամը՝ մինչ մեղքի մեջ ընկնելը: Մինչդեռ մեզնից մի քանիսը շփոթվում են նույնիսկ իրենց շանը անուն դնելիս:

## Առաջնորդվի՛ր Հոգով

Հետևելով Սուրբ Հոգու առաջնորդությանը և թույլ տալով, որ Սուրբ Հոգու պտուղներն ի հայտ գան մեր կյանքում (տե՛ս Գաղատ. 5.22,23)՝ մենք նախաձեռնողներ և վերափոխողներ ենք դառնում: Մենք կարող ենք նպատակայնորեն դրսևորել մեր մեջ

գոյություն ունեցող Աստծո ստեղծարար կարողությունը: Շատերը ձանձրացել են, քանի որ ավելի շատ ընկճված վիճակում են, քան հաստատակամ: Եթե զարգացնենք Աստծուց մեզ տրված ստեղծագործող կարողությունը, դա կհեռացնի ձանձրույթը: Ոմանք ավելի ստեղծագործող են, քան մյուսները: Բայց մեզնից՝ յուրաքանչյուրը կարող է գործածել ստեղծագործող պատկերացումը, հաստատակամությունը և վերափոխումը՝ իր կյանքը դարձնելով ավելի բավարարված, արդյունավետ և կատարյալ:

## ՍԱՏԱՆԱՆ ՊԵՏՔ Է ՓԱԽՉԻ ՔԵԶՆԻՑ

Սատանան խաբում է մեզ (տե՛ս Հովհ. 8.44): Եթե մենք հաստատակամ չենք և չենք դադարում նրա ստերը լսելուց, ուրեմն մեր կյանքում տեղ ենք տալիս նրան: Նա նման է մի մռնչացող առյուծի (տե՛ս Ա Պետր. 5.8), բայց մեր մեջ Հուդայի Առյուծն է՝ Հիսուսը: Մենք պետք է մռնչանք:

Երբ սատանան առաջին քայլն է անում՝ մոտենալով մեզ, հոգևորապես այնքան արթուն պետք է լինենք, որ ետ մղենք նրան: Դա մեզնից մի քանի վայրկյան պետք է պա-

հանջի: Սատանան միշտ փորձում է հարձակվել, և որքան մեզ ետ պահենք, այնքան նա կշարունակի առաջանալ: Բայց եթե նրան դեմ դուրս գանք այն իշխանությամբ, որ ունենք Հիսուս Քրիստոսով, նա կնահանջի:

Մենք պետք է շարունակենք այդ իշխանությամբ հակառակվել նրան: Եթե դադարենք գործելուց, նա՛ կհարձակվի՝ անհանգստացնելով մեզ: Սատանան ստախոս է և պարծենկոտ: Նա գալիս է առյուծի նման, բայց առյուծ չէ: Հիսուս Քրիստոսին հավատալու շնորհիվ մենք զորություն ունենք մեր մեջ. «…Ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է» (Ա Հովհ. 4.4):

Աստծո Խոսքը լա՛վ իմացիր, որ սատանային հակառակ կանգնես և ասես. «Ստախո՛ս: Ո՛չ, ես քեզ չե՛մ լսում»:

Մեր կյանքը կարող ենք վատնել՝ մեզ պաշտպանելով և սատանայից թաքնվելով, բայց կարող ենք նաև հաղթական ապրել՝ ստիպելով, որ նա պաշտպանվի:

## ԸՆՏՐԻ՛Ր ԿՅԱՆՔԸ

«Այսօր երկինքն ու երկիրը վկա եմ կանչում ձեզ վրա, որ կյանքը և մահը, օրհ-

> նությունը և անեծքը ձեր առջև դրի. ուրեմն, կյանքը ընտրի՛ր, որ ապրես դու և քո սերունդը»:
>
> Երկրորդ Օրինաց 30.19

Ուրախությունն ու երջանկությունը դրսից չեն գալիս: Դրանք մեր մեջ են: Դրանք գիտակցաբար արվող որոշումներ են, կանխամտածված ընտրություններ, որ ինքներս ենք անում ամեն օր:

Մեր ծառայության մեջ մի երիտասարդ կին է աշխատում, և նրա կյանքում կան բաներ, որ կցանկանար փոխել: Սակայն, չնայած իր բոլոր հոգսերին, նա ուրախ և երջանիկ է: Այդ երիտասարդ կինն ուրախությամբ և երջանկությամբ լի է ոչ թե նրա համար, որ որևէ խնդիր չունի, այլ՝ որ որոշել է լցվել Տիրոջ ուրախությամբ:

Մեզնից յուրաքանչյուրն ամեն օր պետք է ընտրություն անի. կա՛մ ընտրում ենք հնազանդորեն լսել սատանային և թույլ տալ, որ նա կործանի մեր կյանքը, կա՛մ ընտրում ենք հաստատակամորեն դեմ կանգնել նրան և ապրել լիարժեք կյանքով, որ Աստված ապահովել է մեզ համար Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Ինչևէ, այսպես թե այնպես,

մենք կգնանք Երկինք: Բայց արդյո՞ք ուզում ենք հասնել Երկինք և հայտնաբերել, որ ավելի շատ ուրախություն կարող էինք ունենալ մեր կյանքի ճանապարհին: Եկեք ընտրենք կյանքը և վայելենք այնպես, ինչպես Աստված է կամենում:

## Արթո՛ւն եղեք և աղո՛թք արեք

«Արթո՛ւն եղեք և աղո՛թք արեք (խիստ ուշադի՛ր եղեք), որ փորձության մեջ չմտնեք. հոգին հոժար է, բայց մարմինը՝ տկար»:

Մատթեոս 26.41

Ենթադրենք՝ դուք գիտեք, որ ձեր տունը շրջապատված է թշնամիներով, և նրանք ցանկացած պահի կարող են ներխուժել և հարձակվել: Ի՞նչ եք կարծում՝ արթուն կմնայի՞ք տունը հսկելու համար, թե՞ ոչ:

Ի՞նչ կանեիք, եթե ինչ-որ պատճառով չկարողանայիք արթուն մնալ և տունը հսկել: Արդյո՞ք հոգ չէիք տանի, որ ընտանիքի անդամներից մեկն արթուն մնար և զգուշացներ վտանգի պահին: Այս համարում Հիսուսը մեզ պատվիրում է՝ արթուն մնալ, խիստ ուշադիր, զգոն և ակտիվ լինել, հսկել և աղոթել:

Որպես հավատացյալներ՝ մենք պետք է արթուն և զգոն լինենք: Մենք միշտ պետք է պատրաստ լինենք՝ դեմ կանգնելու թշնամու հարձակումներին:

## Եղի՛ր պատերազմող

«Պատերազմի՛ր հավատքի բարի պատերազմը....»:

Ա Տիմոթեոս 6.12

Լինել հաստատակամ՝ նշանակում է լինել պատերազմող:

Ինչպես Պողոս առաքյալն իր մասին է ասում՝ բարի պատերազմը պատերազմեցի (տե՛ս Բ Տիմոթ. 4.7), ճիշտ այդպես էլ նա Տիմոթեոսին է սովորեցնում՝ պատերազմել հավատքի բարի պատերազմը:

Մեր կյանքում մենք նույնպես պետք է պատերազմենք հավատքի բարի պատերազմը՝ հոգևոր թշնամիների դեմ պայքարելով թե՛ մեր մտքում, և թե՛ մեր սրտում:

Պատերազմել հավատքի բարի պատերազմը՝ նշանակում է ճանաչել թշնամուն, իմանալ, թե երբ է ամեն ինչ ճիշտ ընթանում, և երբ՝ սխալ:

Օրինակ՝ մի անգամ զրուցում էի մի մարդու հետ: Երբ լսում էի նրան, իմ մեջ անհանգստություն էր առաջանում: Ես մտածում էի. «Ի՞նչ է կատարվում և ինչո՞ւ»: Եվ որքան շատ էի մտածում, այնքան ավելի էի համոզվում, թե ինչն էր խնդիրը:

Ամեն անգամ, երբ մենք հանդիպում և զրուցում էինք, ես սկսում էի անհանգստանալ ու մտածել. «Արդյո՞ք այս մարդը ճիշտ է հասկանում ինձ»:

Հերթական հանդիպման ժամանակ նույն զգացումն առաջացավ: Բայց այս անգամ ես ավելի հաստատակամ մոտեցում ցուցաբերեցի. ուղղակի սկսեցի աղոթել. «Հիսուս Քրիստոսի անունով՝ ես իշխանություն եմ վերցնում այս ոգու վրա: Եվ իմ հոգը չէ, թե այս մարդն ինչ է մտածում իմ մասին. դա նրա և Աստծո գործն է: Ես պետք է ազատ լինեմ: Ես չեմ կարող ամբողջ կյանքում մտածել և անհանգստանալ, թե ինչ են մտածում մարդիկ: Սատանա՛, ես այլևս չեմ անհանգստանալու: Հիսուսի անունով՝ դա վերջացած է»:

Ես քայլ արեցի, և ազատությունը ներթափանցեց իմ մեջ: Որքան պասիվ էի, այնքան սատանան ավելի էր չարչարում ինձ:

Սա է մեր խնդիրը: Մենք շատ պասիվ ենք: Շատ հաճախ մենք չենք հակառակվում թշնամուն, երբ նա հարձակվում է՝ բերելով անհանգստություն, վախ, կասկած կամ էլ դատապարտություն: Մենք ետ ենք քաշվում մի անկյուն և թույլ ենք տալիս, որ նա մեզ հարվածի:

Մենք ոչ թե պետք է սատանայի վրա տպավորություն թողնողներ լինենք, այլ՝ պատերազմողներ:

Սատանան ուզում է, որ մենք պատերազմենք մարդկանց հետ, չարությամբ լցվենք նրանց հանդեպ: Նա ցանկանում է գողանալ մեր կյանքի խաղաղությունը և ուրախությունը: Բայց Աստված ուզում է, որ պատերազմող լինենք և հոգևոր աշխարհի թշնամիների դեմ պատերազմենք:

## Ո՞րն է բնօկօնոն վիճօկը

«Որովհետև՝ ուր որ նախանձ (չարություն) և կռիվ (մարմնական ցանկություններ) կա, այնտեղ անկարգություն (անհանգստություն, աններդաշնակություն, մեղսագործություն) և բոլոր չար բաները կան: Բայց վերին իմաստությունը, նախ և առաջ,

սուրբ է, և հետո խաղաղարար, հեզ, հլու, ողորմությունով և բարի պտուղներով լիքը, անկողմնասեր, անկեղծ»:

Հակոբոս 3.16,17

Շփոթությունը վերածնված քրիստոնյայի համար բնականոն վիճակ չէ, և Աստված չի ցանկանում, որ այդ վիճակում լինենք: Այսպիսով՝ ցանկացած ժամանակ, երբ շփոթության մեջ ենք ընկնում, պետք է հարձակում գործենք:

Շատ հաճախ կարծում ենք, թե ինչ-որ բան սխալ է ընթանում, և չենք հասկանում, որ գտնվում ենք հոգևոր հարձակման տակ:

Հաջորդ սխալն այն է, որ արթուն մնալու և աղոթք անելու փոխարեն՝ ինչպես Հիսուսն է պատվիրել, պատասխաններ ենք փնտրում:

Ցանկացած ժամանակ, երբ անբնական վիճակ ես զգում, արթո՛ւն եղիր և աղո՛թք արա: Այսպես սովորում ես անդադար աղոթել (տե՛ս Ա Թեսաղ. 5.17): Եվ հարկ եղած դեպքում պատրաստ ես լինում ցանկացած ժամանակ աղոթելու:

Բայց ո՞րն է հավատացյալի համար բնականոն վիճակը: Այս հարցին պատասխանե-

լու համար ուսումնասիրենք, թե որն է անկանոն վիճակը:

Անհանգստանալ, բարկանալ, փորձել հասկանալ այնպիսի բաներ, որոնց համար պատասխաններ չունենք, մտահոգվել, թե ինչ կմտածեն մեր մասին մարդիկ, ընկճվել, ճնշվել, մտածել, որ մենք լավը չենք կամ ձախողակ ենք: Այս բոլորը բնորոշ են անկանոն վիճակին:

Միգուցե սրանք բնականոն են դարձել որոշ մարդկանց համար, բայց Աստված երբեք չի նախատեսել, որ մենք շարունակաբար տանջանքի, չարչարանքի, մտատանջությունների մեջ ապրենք: Եվ երբ այսպիսի մտքեր են գալիս, պետք է հասկանանք, որ սրանք թշնամու ստերն են:

Վոչման Նին «Հոգևոր մարդը» գրքի «Ծանրություն հոգու վրա» ենթավերնագրում գրել է. «Հոգին կարիք ունի լինելու կատարյալ ազատության մեջ: Այն միշտ պետք է օդի մեջ լողացող լույս լինի… Քրիստոնյան պետք է հասկանա, թե ինչ ծանրություն է դրված իր հոգու վրա: Հաճախ նա ընկճվածություն է զգում, կարծես 1000 ֆունտ բեռ է դրված սրտին… Դա թշնամին է անում՝ նրա հոգին անհանգստացնելու, ուրախությունից և լու-

սավորությունից զրկելու, ինչպես նաև Սուրբ Հոգու հետ համագործակցելուն անընդունակ դարձնելու համար… Ազատ հոգին հիմք է հաղթության համար… Երբ հոգին ընկճված է, միտքը չի կարող ճիշտ ձևով գործել»:

Մեր բոլոր անդամները միասին են գործում: Մենք մեզ պետք է պահենք ազատ և բնականոն վիճակում: Դրա համար պետք է լինենք Տեր Հիսուս Քրիստոսի առաջնորդության ներքո:

## Քրիստոսի աստվածությունը

«Խորհուրդներ ենք քանդում և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ: Եվ գերի ենք բռնում ամեն միտք՝ Քրիստոսին (Մեսիային) հնազանդեցնելու համար»:

Բ Կորնթացիների 10.5

Տերը մեզ հաղթանակ կտա սատանայի դեմ, բայց դա կանի միայն այն ժամանակ, երբ Նրան խնդրենք, որ ներգրավվի մեր խնդրի մեջ:

Ոչինչ չի կարող փոխել մեր վիճակը, եթե մեր ամբողջ արածը միայն նստելն ու երազելը լինի:

Տերը պատրաստ է, Նա կամենում է և կարող է օգնել, բայց մենք պետք է քայլ անենք: Մենք պետք է գործենք, որպեսզի չընկնենք պասիվության, անտարբերության, ծուլության, թմրության, ընկճվածության, հուսախաբության և հուսալքման մեջ: Մենք չենք կանչվել գործելու մեր զգացմունքների համեմատ: Մենք այն ժողովուրդն ենք, որ կանչված է Աստծո Խոսքին ապավինելու և իր կյանքում այդ Խոսքը կիրառելու համար: Դրա համար պետք է ամեն ժամանակ հոգևորապես արթուն մնանք:

# 2

# ՎԵԾ ԲԱՆ, ՈՐ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՐԵՆ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ

*«Բայց Հովհաննես Մկրտչի օրերից մինչև հիմա Երկնքի արքայությունն ուժով է առնվում, և ուժեղները հափշտակում են այն»:*

*Մատթեոս 11.12*

# 2

# ՎԵՑ ԲԱՆ, ՈՐ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՐԵՆ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ

Մենք ուժով պետք է վերցնենք Աստծո թագավորությունը, արդարությունը, խաղաղությունը և ուրախությունը (տե՛ս Հռոմ. 14.17)։ Եթե հուսախաբության մեջ ես, հաստատակամորեն կանգնեցրո՛ւ սատանայի հարձակումը։

Վեց բան կա, որ հաստատակամորեն պետք է անել.

- Մտածել հաստատակամորեն,
- Աղոթել հաստատակամորեն,
- Խոսել հաստատակամորեն,
- Տալ հաստատակամորեն,
- Գործել հաստատակամորեն,
- Սիրել հաստատակամորեն։

## ՄՏԱԾԻ՛Ր ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՐԵՆ

«Կամ՝ ո՞ր թագավորն է, որ գնա ուրիշ թագավորի հետ պատերազմ անելու. մի՞թե

չի նստի առաջ խորհուրդ անի՝ տասը հազարով կարո՞ղ է դեմ կենալ նրան, որ քսան հազարով գալիս է իր վրա»:

Ղուկաս 14.31

Գեներալը, որ պատերազմի է պատրաստվում՝ վտանգի ենթարկելով իրեն և իր բանակը, նախ՝ մտածում, ծրագրում և հաշվարկում է, թե ինչպես կարող է հարձակվել և հաղթել թշնամուն:

Մենք նույնը պետք է անենք ամեն օր, ինչպես նաև մեր քրիստոնեական պատերազմների ժամանակ:

Պետք է մտածենք՝ ինչպե՛ս կարող ենք պարտքը վերադարձնել, ինչպե՛ս կարող ենք տունը մաքրել, ինչպե՛ս կարող ենք ավելի լավ ապահովել ընտանիքը:

Բայց նաև պետք է մտածենք՝ ինչպե՛ս կարող ենք ավելի շատ մարդկանց վկայել, ինչպե՛ս կարող ենք օրհնություն լինել թշվառի համար, ինչպե՛ս կարող ենք ավելի շատ տալ Աստծուն:

Մտածի՛ր սրա մասին: Հարցրո՛ւ ինքդ քեզ, թե ինչպես կարող ես ավելի ներգրավվել ծառայության մեջ:

Իհարկե, եթե դու ընտանիք ունես, դա պետք է լինի քո առաջին պարտականութ-

յունը: Պետք չէ առաջնահերթ պարտավորությունները դուրս թողնել: Եթե երիտասարդ երեխաներ ունես, պետք է շատ ժամանակ անցկացնես նրանց հետ, հատկապես՝ նրանց ձևավորման շրջանում:

Բայց երբեմն ծառայությունը և ընտանիքը հնարավոր է համատեղել: Ես դա արել եմ տարիներ շարունակ: Իմ ծառայությունը, որը կոչվում է «Կյանքը՝ Խոսքի մեջ», սկսեցի՝ երբ որդիս ընդամենը մեկ տարեկան էր:

Դու կհայտնաբերես, որ ցանկացած գործ կարող ես անել, եթե Աստծուց ես կանչված: Եվ եթե ցանկություն ունես, այդքանը բավական է կարողանալու համար:

Եղի՛ր ստեղծագործող: Մի՛ նստիր՝ միայն երազելով, թե ավելին կարող էիր անել: Նախաձեռնի՛ր և սկսի՛ր: Մտածի՛ր հաստատակամորեն:

## Աղոթի՛ր հաստատակամորեն

«Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհքի աթոռին (Աստծո շնորհաց գահին, մենք՝ մեղավոր անարժաններս), որ ողորմություն ընդունենք (մեր անհաջողությունների համար), և շնորհք գտնենք՝

պատշաճ ժամանակին օգնելու (համապատասխան օգնություն գա ճիշտ ժամանակին, երբ մենք դրա կարիքը կունենանք)»:

Եբրայեցիների 4.16

Մենք պետք է գանք Աստծո գահի առջև՝ առանց վախի, վստահորեն և

համարձակությամբ, այսինքն՝ հաստատակամորեն:

Չպետք է վախենալ կամ ամաչել Աստծուց: Մենք կարող ենք համարձակորեն մոտենալ Նրան և խնդրել այն, ինչ մեզ պետք է: Կարող ենք Նրան խնդրել, որ մեզ համար իրականություն դարձնի Իր Խոսքում տված խոստումները:

Եփեսացիներին ուղղված թղթի 3.20-ում ասվում է, որ Աստված կարող է շատ ավելին անել, քան այն ամենը, ինչ համարձակորեն խնդրում ենք կամ մտածում (անսահմանորեն՝ մեր աղոթքներից, մտածմներից, հույսերից կամ երազանքներից ավելին): Մենք պետք է վստահ, համարձակ, հաստատակամ, խիզախ քրիստոնյաներ լինենք:

Երբ մոտենաս Աստծո գահին, մոտեցի՛ր հաստատակամորեն:

## Խոսի՛ր հաստատակամորեն

«Եթե մեկը խոսում է, թող՝ ինչպես Աստծո հրամաններ խոսի….»:

Ա Պետրոս 4.11

Որպես Աստծո զավակներ՝ մենք խոսելիս պետք է հաստատակամ ձայն ունենանք:

Ես նկատի ունեմ ոչ թե մարմնի, այլ չար ուժերի դեմ հաստատակամ լինելը:

Մատթեոս 10.16-ում Աստված սովորեցնում է լինել աղավնիների պես միամիտ, իսկ Առակաց 28.1-ում՝ առյուծի պես համարձակ:

Ես մեծ դժվարությամբ եմ հաշտվել այս երկու համեմատություններին:

Հետո հիշեցի մի քրիստոնյայի մասին, ում տնօրենը քրիստոնյա չէր: Վերջինս կանչել էր նրան և սկսել անարդար ձևով մեղադրել: Աշխատողը գիտեր, որ եթե խոսեր՝ տնօրենն ավելի կբարկանար, ուստի նա միայն լռել էր՝ սպասելով, որ Տերն իրեն պաշտպաներ:

Գուցե արտաքինից նա հանգիստ էր՝ ինչպես աղավնին, բայց ներսում համարձակ էր՝ առյուծի նման:

Նույնը և մենք՝ մարմնով երբեմն պասիվ ենք, բայց հոգով հաստատակամորեն ար-

ճագանքում ենք: Կարող ենք թույլ տալ, որ տհաճ բառեր ուղղվեն մեզ, բայց ներքուստ չընդունենք դրանք: Կարող ենք մերժել մեզ վրա եկող դատապարտությունը:

Երբ մեզ վիրավորում են, կարող ենք Հոգով աղոթել: Հետո, երբ դուրս գանք այդ վիճակից, կարող ենք հաստատակամորեն և իշխանությամբ խոսել հոգևոր աշխարհում գտնվող թշնամիների վրա, ովքեր մեզ վիրավորել են:

Ցանկացած ժամանակ, երբ ինչ-որ մեկն իմ դեմ է դուրս գալիս, ես անմիջապես սկսում եմ հոգով աղոթել՝ հոգևորապես պաշտպանելով ինձ:

Տարիներ շարունակ թույլ եմ տվել, որ մարդիկ ինձ վրա բարդեն իրենց տրամադրությունը: Կար ժամանակ, երբ փորձեցի մարմնավորապես դեմ դուրս գալ նրանց, բայց համոզվեցի, որ այդ միջոցը չի օգնում: Ես հասկացա, որ մեր պատերազմը մարմնի և արյան դեմ չէ, այլ հոգևոր չար ուժերի և իշխանությունների դեմ: Այսպիսով, սովորեցի, թե ինչպես հոգևոր պայքար մղել:

Միգուցե դու նույնպես պետք է սովորես և անես նույնը: Եղի՛ր միամիտ՝ ինչպես աղավնին, և համարձակ՝ ինչպես առյուծը:

Երբ խոսում ես մարդկանց հետ, գլուխդ մի՛ կախիր, մի՛ դժգոհիր, մի՛ փնթփնթա և մի՛ տրտնջա: Հաստա՛տ նայիր նրանց աչքերին և խոսի՛ր պարզ, հստակ, անկեղծ: Ճի՛շտ ձևակերպիր և շարադրիր միտքդ: Վստա՛հ, համոզի՛չ, հասկանալի՛ ասա այն, ինչ ուզում ես ասել:

Մի՛ եղիր կեղծավոր, անվստահ, անապահով. եղի՛ր համարձակ:

Եթե դու երգում և փառաբանում ես Աստծուն, դա հաստատակամորե՛ն արա:

Երբ ցանկանում ես ինչ-որ բան ասել, խոսի՛ր՝ ինչպես Աստծո մի մարգարե: Արա՛ ուրախությամբ, գթառատությամբ, ողորմածությամբ և հաստատակամորեն:

## Տո՛ւր հաստատակամորեն

«Տվե՛ք, և կտրվի ձեզ՝ լավ չափով՝ թափ տրված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը»:

Ղուկաս 6.38

Երբ տալիս ենք, պետք է տանք առատորեն և հաստատակամորեն, քանի որ՝ ինչպես տալիս ենք, այնպես էլ ստանում ենք:

Երբ նայում ենք դրամապանակին, չպետք է այնտեղից հանենք նվազագույնը, ընդհա-

կառակը՝ պետք է տանք այնպես, ինչպես Աստված է տալիս՝ առատորեն:

Չկա շատ կամ քիչ նվիրաբերություն. մենք պետք է սովորենք տալ հաստատակամորեն՝ ինչպես մեր քրիստոնեական կյանքի ցանկացած հարցերում ենք վարվում:

Ես ուզում եմ տալ: Եվ ցանկանում եմ տալ ամեն ժամանակ:

Մի անգամ քրիստոնեական գրախանութում տեսա մի փոքրիկ նվիրաբերության արկղ, որի վրա գրված էր. «50 ցենտով կարող է 2 օր կերակրվել 2 երեխա»:

Երբ նվիրատվություն անելու համար բացեցի դրամապանակս, մի ձայն ներսից ասաց. «Կարիք չկա, որ դա անես»:

Անմիջապես ըմբոստացա: Ոչ ոք չէր կարող դա նկատել իմ արտաքինից, բայց ես իմ ներսում արթնացա: Վերցրի դրամապանակս, հանեցի գումարը և դրեցի արկղի մեջ: Ես դա արեցի՝ ապացուցելու, որ կարող եմ տալ: Դա իմ ազատ կամքն ապացուցող գործողություն էր:

Նույնը կարող ես անել և դու: Երբ ուզում ես ետ քաշվել, տո՛ւր ավելի շատ: Ցո՛ւյց տուր սատանային, որ հաստատակամորեն կարող ես տալ:

## Գործի՛ր հաստատակամորեն

«Ամեն բան, որ ձեռքդ գտնի անելու, ուժովդ արա....»:

Ժողովող 9.10

Ինչ-որ հանձն ենք առնում, պետք է հաստատակամորեն անենք: Մի՛ վերցրու առաջադրանքներ, որոնցից կսարսափես և կցանկանաս փախչել: Բորբոքվի՛ր Սուրբ Հոգով և համարձակորեն հայտարարի՛ր. «Սա այն գործն է, որ Տերն է ինձ տվել, և ես, Սուրբ Հոգու օգնությամբ, սա կանեմ իմ ամբողջ կարողությամբ՝ Աստծո փառքի համար»:

## Սիրի՛ր հաստատակամորեն

«Սա է Իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի: Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան՝ որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար»:

Հովհաննես 15.12,13

Որպես Աստծո որդիներ՝ մարդկանց պետք է սիրենք՝ ինչպես Աստված է մեզ սիրում: Սիրել հաստատակամորեն և զոհողությամբ:

Սիրելը՝ ջանք ներդնելն է: Մենք երբեք չենք սիրի որևէ մեկին, եթե համաձայն չենք գին վճարելու:

Մի անգամ մի կնոջ գեղեցիկ ականջօղեր նվիրեցի: Մարմինս ուզում էր դրանք պահել, բայց հոգիս ինձ ասաց, որ հնազանդ լինեմ Տիրոջը և նվիրեմ:

Որոշ ժամանակ անց այդ կինը հավաքույթի ընթացքում պատմեց, թե ինչպես են իրեն նվիրել այդ օղերը, և ասաց, որ նա դրանք կրում է որպես ձրի պարգև:

Տերն ինձ ասաց. «Այո՛, դա ձրի պարգև էր նրա համար, բայց քեզ համար ինչ-որ բան արժեցավ, ինչպես փրկությունը, որ ձրի պարգև է քեզ համար, բայց Հիսուսի համար Իր կյանքն արժեցավ»:

Սերը բոլոր պարգևներից ամենազորավորն է: Երբ ցույց տաս Աստծո սերը, եղի՛ր անշահախնդիր, զոհաբերող, հաստատակամ:

# 3

# ԻՆՉՊԵ՞Ս ՎԱՐՎԵԼ ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅԱՆ ՀԵՏ

# 3

## ԻՆՉՊԵ՞Ս ՎԱՐՎԵԼ ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ըստ Վեբսթերի՝ «հուսախաբվել» նշանակում է «հույսը, ցանկությունը կամ սպասումը անբավարար թողնել»:

Այլ խոսքով՝ երբ մենք հույս ենք տածում, ցանկանում կամ ինչ-որ բանի ենք սպասում, և դա չի բավարարվում, մենք հուսախաբվում ենք:

Մեզնից ոչ ոք այնքան հավատք չունի, որ կյանքում զերծ մնա հուսախաբություններից: Հուսախաբությունը փաստ է կյանքում, մի բան, որին պետք է հանդիպենք և ճիշտ լուծում տանք, հակառակ դեպքում դա կործանման կհասցնի:

Հաճախ մարդիկ կործանվում են՝ առանց պատճառն իմանալու: Նրանք չեն հասկանում, որ ամեն ինչ սկսվում է մի փոքր հուսախաբությունից, որն էլ, ճիշտ լուծում չգտնելով, կործանարար է լինում ապագայում:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ ԴԱՐՁՐՈՒ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԻՆ

Եթե առավոտյան արթնանալով՝ ես մի փոքր ցավ զգամ կոկորդում, փռշտամ կամ գլխացավ ունենամ, կհասկանամ, որ մրսել եմ: Ես հավատում եմ, որ եթե աղոթեմ, օգտագործեմ վիտամին C և A, լավ հանգստանամ, կկանխեմ հիվանդությունը:

Հիվանդությունը հաճախ դրսևորվում է նախանշաններով, որոնք հայտնում են, որ ինչ-որ բան այն չէ, և կարիք կա հոգ տանելու՝ վիճակը չբարդանալու համար:

Հուսախաբությունը ճիշտ այդպես է գործում: Ի հայտ են գալիս բացահայտող նշաններ, որոնց նկատմամբ հաստատակամ գործողություններ են պետք:

Ինչպես ասացինք, հենց հայտնաբերում ենք սատանայի հարձակումների տակ գտնվելու առաջին նախանշանները, պետք է անմիջապես հակառակ կանգնենք նրան: Ավելի լավ է դեմ կանգնենք հենց սկզբից, քան սպասենք, մինչև վրա հասնեն խորը ընկճվածությունն ու հուսախաբությունը:

Բոլորս գիտենք, որ ավելի հեշտ է միանգամից ներել նրան, ով մեր նկատմամբ սխալ է վարվել, քան ներել հետո՝ թույլ տալով, որ

սատանան մեզ բարկացնի, դառնացնի և վշտացնի:

Նույնը վերաբերում է հուսախաբությանը: Ավելի հեշտ և արդյունավետ է անմիջապես ազատվել դրանից, քան սպասել, մինչև դա զարգանա՝ դառնալով հուսալքում, ընկճվածություն, և ամայացնի մեր կյանքը:

## Հուսախաբության պատճառները

Ենթադրենք՝ խնջույք եք կազմակերպել, կամ էլ բացօթյա միջոցառում, օրինակ՝ հարսանիք:

Դուք հրավիրել եք ձեր բոլոր հարազատներին և ընկերներին, պատրաստություն եք տեսել, որի համար շատ գումար և ժամանակ եք տրամադրել: Բայց հանկարծ անձրևում է, և ամեն բան վերջանում է:

Դա հուսախաբություն է, բայց՝ ավելի թեթև, մի բան, որից կարելի է ազատվել:

Նման պարագաներում ես սովորել եմ ուղղակի ասել. «Հուսախաբեցնող է, բայց աշխարհի վերջը չէ. պետք չէ ընկճվել»:

Հուսախաբություններն ավելի լուրջ են և փնասող, երբ մարդիկ են ներգրավված, ոչ թե անշունչ երևույթներ, ինչպես օրինակ՝ եղանակը:

## ՔԶԵՐԻՆ ՎԱՍՏԱՀԻ՛Ր

«Բայց Հիսուսն Իր անձը չէր վստահում նրանց, որովհետև Ինքը ճանաչում էր ամեն մարդու»:

Հովհաննես 2.24

Եկեք ոչ թե ընտրենք հուսահատվելը, այլ սովորենք այն հաղթահարել, որովհետև կյանքը կատարյալ չէ, և մարդիկ ինքնին կատարյալ չեն:

Վերջին հաշվով՝ անկախ նրանից, թե ովքեր են, կարող են հուսահատեցնել մեզ, եթե չափից ավելի վստահենք նրանց: Սա ցինիզմ կամ քննադատություն չէ, այլ ուղղակի մեր կյանքի փաստն է: Դրա համար պետք չէ չափազանց շատ վստահել մարդկանց, նույնիսկ եթե նրանք մեր ամենամտերիմներն են:

Հիմա դա կարող է խորթ թվալ, հատկապես նրանց, ովքեր տարիներ շարունակ վստահել են մարդկանց:

Ինչպես Հիսուսը, մենք նույնպես պետք է սիրենք բոլորին, բայց չպետք է նրանց 100 տոկոսով վստահենք: Միայն հիմարն է դա անում: Ինչո՞ւ, որովհետև վաղ թե ուշ մարդիկ մեր սպասելիքները չեն արդարացնի ճիշտ

այնպես, ինչպես մենք չենք արդարացնի նրանց սպասելիքները:

Մարդկային էությունը զերծ չէ հիասթափեցնելու, ձախողելու հատկանիշներից: Եվ միայն իմաստուն մարդն է ղեկավարում ինքն իրեն և մյուսներին:

Ամեն դեպքում հուսախաբության լավագույն լուծումը դրանից խուսափելն է: Եվ դա անելու լավագույն ձևը հավասարակշռված լինելն է հուսալիս, ցանկանալիս և սպասումներ ունենալիս, հատկապես՝ եթե դրանք կապված են մարդկանց հետ:

> «Իմաստուն որդին կուրախացնի իր հորը, և հիմար որդին իր մոր տրտմությունն է»:
>
> Առակաց 10.1

Երբեմն երեխաներն են հուսախաբության առիթ հանդիսանում իրենց ծնողների համար: Այսօր շատ ծնողների թվում է, թե իրենց երեխաներն իրենց խոսքը չեն լսում, և իրենց ասածը նրանց մի ականջից մտնում, մյուսից դուրս է գալիս:

Ես գիտեմ, թե դա ինչ է: Երբ իմ որդին՝ Դանը, մեծանում էր, նա հենց այդպիսին էր: Ես փորձում էի խոսել նրա հետ, բայց նա

այնպիսի հայացքով էր նայում, կարծես ոչինչ չէր լսում:

Մի անգամ դպրոցում նա պատժվեց մի հիմար արարքի համար: Երբ հարցրի, թե ինչու է նման բան արել, նա միայն թոթվեց ուսերը:

«Դա պատասխան չէ,- ասացի ես,- ինչո՞ւ ես նման բան արել»:

«Չգիտեմ»,- փնթփնթաց նա:

Ես նրան մի փոքր դաս տվեցի վարքի կարևորության վերաբերյալ, որ ուշադիր լինի և սովորի այն ամենը, ինչը նրան պատրաստում է ապագա կյանքի համար:

Հաջորդ օրը նրան ուղարկեցի դպրոց՝ հույս ունենալով մեծ փոփոխություն տեսնել նրա վարքի մեջ: Դրա փոխարեն նա տուն եկավ վարքի վերաբերյալ հերթական նշումով, որ դասերն սկսվելու պահից իրեն վատ է պահել:

Սա իսկապես հուսախաբեցնող է ծնողի համար, հատկապես՝ երբ երեխան մեծանում է, և դու ավելին ես սպասում նրանից:

Որքան մեծ է հույսը, սպասումը և ցանկությունը, այնքան մեծ է լինում հուսախաբությունը: Եվ նույնիսկ ամենափոքր պատա-

հարը կարող է պատճառ դառնալ դառը հուսահատության, որն էլ կարող է լուրջ խնդիրներ առաջացնել, եթե դրան շտապ լուծում չտրվի:

## Փոքր աղվեսներ, որոնք ավերում են այգիները

«Բռնե՛ք մեզ համար աղվեսներին, այգիներն ավերող պստիկ աղվեսներին…»:

Երգ Երգոց 2.15

Փոքր հուսախաբությունները կարող են վախ առաջացնել, ինչը կհանգեցնի մեծ դժվարությունների, և արդյունքում մեծ վնաս կկրենք:

Բացի մեծ հուսախաբություններից, որոնց հանդիպում ենք, երբ զրկվում ենք աշխատանքից, օգնությունից, տնից, մենք կարող ենք ունենալ նաև փոքր հուսախաբություններ, որոնք առաջանում են փոքր պատճառներից:

Ենթադրենք՝ ինչ-որ մեկը ձեզ հետ պետք է հանդիպեր ճաշելու նպատակով, բայց չի գալիս: Կամ՝ դուք նպատակամղված գնում եք քաղաքի կենտրոն՝ զեղչ գներով գնումներ կատարելու, և հասնելով այնտեղ, տեսնում եք, որ ամեն ինչ վաճառված է: Կամ էլ հա-

տուկ նպատակով գեղեցիկ հագնվում եք, բայց վերջին պահին նկատում եք, որ ձեր հագուստը պատռված է:

Սրանք, իրականում, փոքր պատահարներ են, բայց կարող են ցավ պատճառել: Դրա համար պետք է իմանալ, թե ինչպես վարվել նմանօրինակ իրավիճակների հետ: Եթե ոչ, դրանք կարող են դուրս սպրդել իրենց սահմաններից և լուրջ խնդիրների առջև կանգնեցնել:

Օրինակ՝ պատկերացրու, որ օրն սկսում ես ուշանալով և արդեն իսկ շփոթված ես: Գրասենյակ գնալու ճանապարհին երթևեկության պատճառով ավելի ես ուշանում:

Հետո, երբ վերջապես հասնում ես գրասենյակ, տեղեկանում ես, որ ինչ-որ մեկը բամբասել է քեզ-քո մասին:

Սթափվելու համար գնում ես սուրճ խմելու, և պատահաբար սուրճը թափվում է քեզ վրա, մինչդեռ կարևոր հանդիպում ունեիր ղեկավարի հետ և ժամանակ չունես հագուստդ փոխելու:

Այս բոլոր դեպքերը կուտակվելով՝ նյարդայնացնում են քեզ:

Հենց այդ պահին բժշկից լուր ես ստանում, որ առողջական վիճակդ հուսադրող չէ,

և այդ ամենի հետ միասին նշանածդ է զանգահարում՝ տեղեկացնելով, որ ուզում է նշանը ետ տալ, ինչի մասին արդեն հայտարարվել էր ամբողջ աշխարհով:

Ինչպիսի՜ն կլինի քո արձագանքը՝ համա՞տք, թե՞ ըմբոստություն:

Բոլոր այս փոքրագույն անհաջողությունները՝ երթևեկությունը, բամբասանքը, սուրճը քեզ պատճառեցին մեծագույն դժբախտություն, երբ դու պետք է դիմադրեիր ավելի լուրջ խնդիրների՝ հիվանդությանը և ձախողված ամուսնությանը:

Այդ է պատճառը, որ պետք է զգուշանանք փոքրիկ աղվեսներից, որոնք ավերում են այգիները, քանի որ բոլորը միասին կարող են այնքան վնաս հասցնել, որքան՝ լուրջ հիասթափությունները, որոնք հաճախ լրացնում կամ հետևում են դրանց:

Մենք պետք է սովորենք վարվել այնպես, ինչպես Պողոսը վարվեց, երբ օձը բռնեց նրա ձեռքից: Նա պարզապես դեն նետեց նրան (տե՛ս Գործք 28.1-5): Եթե սովորենք արագ ձևով լուծում տալ առաջացած հիասթափությանը, դա չի խորանա և չի տանի ավերման:

# 4

# ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ

*«Ինչո՞ւ ես տրտմում, ո՛վ իմ անձ, և շփոթված ես ինձանում: Ապավինի՛ր Աստծուն, որովհետև էլ կգոհանամ Նրանից, որ իմ երեսի փրկությունն է»:*

*Սաղմոս 42.5*

# 4

## ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մենք պետք է հուսանք Աստծուն, քանի որ չգիտենք, թե ինչ կպատահի մեզ հետ:

Աստվածաշնչի մի քանի հատվածներում (օրինակ՝ Ա Կորնթ. 10.4-ում) Հիսուսը ներկայացվում է որպես Ժայռ: Կողոսացիներին ուղղված թղթի 2.7-ում Պողոս առաքյալն ասում է, որ մենք Նրա վրա հաստատված և հիմնված պետք է լինենք:

Աստվածաշունչը ոչ մի տեղ չի սովորեցնում, որ պետք է հաստատվենք և հիմնվենք մարդկանց, մեր աշխատանքի, եկեղեցու, ընկերների կամ մեր իսկ անձի վրա:

Ոչ ոք և ոչ մի բան չի կարող այնքան հաստատուն և կայուն լինել, ինչպես Հիսուսն է: Այդ պատճառով է, որ չեմ ցանկանում՝ մարդիկ հաստատվեն իմ ծառայության կամ ինձ վրա: Ես ուզում եմ նրանց ցույց տալ Հիսու-

սին: Գիտեմ, որ ի վերջո ես ինչ-որ ձևով կձախողեմ նրանց սպասումները ճիշտ այնպես, ինչպես նրանք՝ իմը:

Սա մարդկային բնությունն է. բոլորն էլ ձախողում են:

Հաստատվա՛ծ և հիմնվա՛ծ եղիր Հիսուսի վրա: Հուսա Նրա՛ն, ոչ թե մարդուն, պարագաներին, բանկային հաշվին, աշխատանքին կամ որևէ այլ բանի:

Եթե չհուսաս քո փրկության Ժայռին, վաղ թե ուշ կհուսախաբվես, որն էլ կտանի հիասթափության և կործանման:

### ՄԱՐԴԻԿ ԱԽԱԼԱԿԱՆ ԵՆ

> «Կոտրած ատամ և դյուրագլոր ոտք է՝ նեղ օրը անհավատարիմ մարդուն ապավինելը»:
>
> Առակաց 25.19

Աղջիկս նշանված էր, և շուտով պետք է կայանար հարսանյաց հանդեսը: Մատանին ընտրված էր, գումարը՝ հավաքված, և հարսանյաց ծրագիրը պատրաստ էր, երբ փեսացուի անհավատարմության պատճառով ամեն բան հայտարարվեց ավարտված:

Դա իսկապես շատ տխուր իրավիճակ էր, հատկապես սիրելի, հրաշալի, անուշիկ, երիտասարդ հարսնացուի համար: Բայց այդ ժամանակ, տխրելու և ինքն իրեն խղճալու փոխարեն, նա ասաց. «Բարի՛, ես հարսանիքից առաջ իմացա, թե ինչպիսի մարդ է նա, և ոչ թե կյանքի ճանապարհին, երբ շատ ուշ կլիներ»:

Ես այնքան հպարտ էի նրանով: Ուրախ էի՝ տեսնելով, թե ինչպես նա տարավ այդ հուսախաբ վիճակը:

Ինչևէ, նա հասկացավ, որ տեղի ունեցածը լավագույնն էր, քանի որ ամեն ինչ պարզվեց հարսանիքից առաջ և ոչ թե՝ հետո: Հայրը և ես նրան քաջալերեցինք, խորհուրդներ տվեցինք, այնուհետև միասին աղոթեցինք: Բացի այդ, նա սկսեց լսել իմ ուսուցումների ձայնագրությունները և կարդալ քաջալերող ու հոգևորապես բարձրացնող գրքեր:

Աղջիկս դուրս եկավ այդ դժվար իրավիճակից, որովհետև նրա հավատքն ու վստահությունը ոչ թե մարդու« այլ Հիսուսի վրա էր: Հուսախաբված և հուսալքված՝ նա շարունակում էր նայել Հիսուսին՝ որպես հաստատակամության օրինակի:

Այժմ նա ամուսնացած է մի հրաշալի մարդու հետ, և միասին ծառայում են Աստծուն:

## Շարունակի՛ր նայել Հիսուսին

«Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք մեզ շրջապատած, դե՛ն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը: Մտի՛կ տանք հավատքի Զորագլխին և Կատարողին՝ Հիսուսին, որ Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ և ամոթն արհամարհելով՝ Աստծո աթոռի աջ կողմը նստեց:

Ուրեմն, մտածե՛ք Նրա մասին, որ Իր դեմ եղած այսպիսի հակառակություն քաշեց մեղավորներից, որ դուք ձեր անձերով չհոգնեք թուլացած»:

Եբրայեցիների 12.1-3

Հատուկ տաղանդ չի պահանջվում՝ ամեն բան թողնելու և ասելու. «Ես հրաժարվում եմ»: Ցանկացած մարդ կարող է դա անել: Բայց չպետք է լինել հրաժարվող քրիստոնյա: Երբ կառչես Հիսուսից, քեզ կփոխանցվեն ուժ, զորություն, քաջություն, և անսովոր ու հրաշալի բաներ կկատարվեն: Նա քեզ երբեք չի՛ լքի:

Միգուցե ասես. «Օ՜, Տե՛ր, ինձ մենակ թող: Այլևս չեմ ուզում որևէ տեղ գնալ, շարունակել»: Բայց Նա չի թողնի, որ դու վայր ընկնես:

Ես սովոր էի թողնել և հեռանալ: Բայց այժմ յուրաքանչյուր օր սկսում եմ նոր ձևով՝ աղոթքով, Աստվածաշունչ կարդալով, Աստծո Խոսքը խոսելով և Աստծուն փնտրելով:

Գուցե սատանան իմ ականջին գոռա. «Դա ոչ մի բանով քեզ չի՛ օգնում, տարիներ շարունակ դա ես անում, և նայի՛ր, թե ինչի ես հասել. դու մինչև հիմա անհաջողությունների մեջ ես»:

Այդ ժամանակ ես ասում եմ. «Ձայնդ կտրի՛ր, սատանա՛: Աստվածաշունչն ասում է, որ ես պետք է Հիսուսին նայեմ և Նրա օրինակին հետևեմ: Նա է իմ հավատքի Առաջնորդը, Սկիզբն ու Վերջը»:

Իմ դուստրը հենց սա էր արել. նա իր հայացքն ուղղել էր Հիսուսին և հաղթական հոգով առաջ գնացել: Նա կարող էր նայել իր անցյալին և ասել. «Սա իմ կյանքում կրկին պատահեց: Ես այս ամենը տարել եմ մի անգամ, հետո՝ երկրորդ, և հիմա էլ երրորդ անգամ»: Դրա փոխարեն նա շարունակեց նայել Հիսուսին:

Այսօր մենք պետք է որոշում կայացնենք, որ ինչ էլ պատահի, կշարունակենք առաջ գնալ՝ անկախ իրավիճակներից:

## Վերականգնվի՛ր

«Իրար հանդեպ միևնույն խորհուրդն ունեցե՛ք, բարձր բաներ մի՛ խորհեք, այլ խոնարհների հետ խոնարհվե՛ք, ձեր անձերում իմաստուն մի՛ եղեք»:

Հռոմեացիների 12.16

Վերջերս մտածում էի, թե ինչ է արել Տերն ինձ համար իմ կյանքի և ծառայության ընթացքում: Այժմ շատ եմ զարմանում, երբ ետ եմ նայում. հեշտ չի եղել: Շատ անգամներ ցանկացել եմ թողնել և հեռանալ:

Ես ձեզ պատմել եմ, որ երբ հուսախաբվում էի, Տերն ինձ ասում էր. «Ջո՛յս, երբ հուսախաբություն է գալիս, պետք է կարողանաս շտապ վերականգնվել, իսկ եթե ոչ՝ հուսահատության մեջ կընկնես, և դա քեզ կործանման կտանի»:

Դրա համար պետք է սովորենք հարմարվել, ուղղվել և փոխել մեր ուղղությունը: Հենց

այդպես վարվեց իմ աղջիկը, և դա իրեն նոր և ուրիշ կյանքի առաջնորդեց:

Ավելի հեշտ է հարմարվել, երբ բացօթյա խնջույքի ժամանակ հանկարծ անձրևում է, քան հարմարվել, երբ իմանում ես, որ պետք է նշանը ետ տալ: Բայց պատասխանը նույնն է բոլոր պարագաներում՝ հուսախաբությանը պետք է լուծում տալ:

Մինչև չսովորենք վերականգնվել, հարմարվել, ուղղվել և գնալ նոր ճանապարհով, երբեք չենք գտնի այն նոր և ոգևորող կյանքը, որ Աստված պահել է մեզ համար:

# 5

# ՄՏԱԾԻ՛Ր ԱՍՏԾՈ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

*«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությունով՝ ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում»:*

*Փիլիպեցիների 4.6,7*

# 5

## Մտածի՛ր Աստծո գործերի մասին

Եթե չես ցանկանում կործանվել՝ մոռացի՛ր հուսահատությունները:

Գիտե՛ք արդյոք, որ ձեր զգացմունքները փոխկապակցված են ձեր մտածելակերպի հետ: Եթե չեք հավատում, որ դա ճիշտ է, 20 րոպե խորհե՛ք կամ մտածե՛ք միայն ձեր դժվարությունների մասին: Կարող եք համոզվել, որ դրանից հետո ձեր զգացմունքները և դեմքի արտահայտությունը կփոխվեն: Դուք կա՛մ կբարկանաք, կա՛մ կընկճվեք, կա՛մ էլ կտրտմեք: Սակայն ձեր իրավիճակը չի փոխվի:

Դուք կարող եք եկեղեցի գնալ, փառաբանել, քարոզներ լսել, բայց կմնաք նույն վիճակում, եթե ձեր միտքն ու հոգին Տիրոջ վրա կենտրոնացնելու փոխարեն նստեք եկեղեցում և մտածեք ձեր խնդիրների մասին:

## Ո՞ՒՄ ՀԵՏ ԵՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՄ

Իմ ամսագրերից մեկում ընթերցողներին ուղղված հարցը հետևյալն էր. «Ո՞ւմ հետ ես ընկերություն անում՝ Աստծո՞, թե՞ հոգսերիդ»:

Ինչո՞ւ այս հարցը տվեցի նրանց, որովհետև մի առավոտ Տերը նույն հարցն ինձ տվեց. «Ջո՛յս, դու քո հոգսի հետ ես ընկերություն անելու՞, թե՞ Ինձ հետ»: Հետո Նա ասաց այն, ինչ ես հիմա քեզ եմ ասում. «Մի՛ մտածիր քո հուսալքումների մասին»:

Երբ հուսախաբվում ես, մի՛ նստիր և քեզ խղճա, դու միակը չես, որ հուսախաբության ես հանդիպել:

Երբեմն դժվար է սա հասկանալ, որովհետև սատանան ջանում է համոզել, որ մենք միակն ենք, որ դժբախտության ենք հանդիպել:

Դա ճիշտ չէ:

Մի անգամ ես շատ քաջալերեցի իմ աղջկան, երբ պատմեցի, թե ինչպիսին էր իմ կյանքը 18-23 տարեկան հասակում: Երբ ավարտեցի, նա իրեն իսկապես օրհնված զգաց:

Ինչպես բոլորի, այնպես էլ նրա հետ մի քանի դժբախտ դեպքեր էին պատահել: Ես նույնպես տարիներ շարունակ սարսափելի կյանքով եմ ապրել:

Ես նրան պատմեցի, որ 18-19 տարեկան հասակում ապրում էի Կալիֆոռնիայի՝ Օքլենդի տանը, որն իմ բնակարանից 3000 մղոն հեռավորության վրա էր: Չունեի մեքենա, հեռուստացույց, հեռախոս: Չկար որևէ մեկը, ով իմ մասին հոգ կտաներ: Ամեն գիշեր տխուր պատմություններ էի գրում և ինքս ինձ խղճում, իսկ առավոտյան գնում էի աշխատանքի:

«Փառք Աստծո, դու ունես լավ ընտանիք, լավ աշխատանք, լավ տուն, լավ մեքենա, -ասացի նրան,- ես դրանցից և ոչ մեկը չունեի»:

Երբ կյանքիս պատմությունն ավարտեցի, նա ոգևորվեց իր ներկա դրության և ապագայի համար:

Սա է այն ընտրությունը, որի հնարավորությունն ունի մեզնից յուրաքանչյուրը: Մենք կարող ենք ոգևորվել՝ մտածելով այն ամենի մասին, ինչ որ ունենք, և կարող ենք հուսախաբվել՝ մտածելով այն ամենի մասին, ինչ որ չունենք:

Իրականությունն այն է, որ եթե չունենք, ուրեմն՝ չունենք, և նստելով ու երազելով, որ լավ կլիներ, եթե ունենայինք, ոչինչ չի փոխվի: Միգուցե կցանկանայինք, որ այդպես լիներ, բայց այդպես չէ:

Եթե ուզում ենք հաղթահարել հուսախաբությունը և խուսափել հուսահատությունից ու կործանումից, պետք է միջոցներ ձեռնարկենք և ճիշտ մոտենանք իրականությանը:

Իրականությունը կարող է շատ տխուր լինել, բայց մենք ընտրության հնարավորություն ունենք. մենք կարող ենք ընկերություն անել կա՛մ մեր խնդիրների, կա՛մ էլ Աստծո հետ:

Կարևոր չէ, թե ինչ ենք կորցրել կամ ինչ վիճակում ենք. մենք ունակ ենք մեր բացասական մտքերը փոխարինելու դրական մտքերով:

### ՄՏԱԾԻ՛Ր ԱՅՍ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

> «Այսուհետև, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, պարկեշտ, արդար, սուրբ, սիրուն, բարի անուն ունեցող, առաքինի և գովելի, ա՛յն մտածեք»:
>
> Փիլիպեցիների 4.8

Նույն գլխի 6-րդ և 7-րդ համարներում ասվում է, որ եթե խնդիրներ ունենք, չպետք է անհանգստանալ կամ վշտանալ, այլ՝ աղոթքով Աստծուն դիմել: Եթե դա անենք, Տիրոջ խաղաղությունը մեզ կպահպանի վախից և անհանգստությունից, և մեր միտքն ու սիրտը զգոն վիճակում կլինեն:

Բայց 8-րդ համարում տեսնում ենք, որ Տիրոջ ուրախությամբ և խաղաղությամբ լցվելու համար մեկ ուրիշ բան էլ կա, որ պետք է անենք. պետք է կառավարենք մեր մտածմունքները՝ մերժենք բացասական մտքերը և դրական մտքեր ընդունենք:

Առաջինը, որ պետք է անենք՝ ճշմարիտ բաների մասին մտածելն է: Բայց չի նշանակում, որ պետք է մտածենք միայն այն բաների մասին, որոնք արդեն կատարվել են:

Տարբերություն կա ճշմարտության և իրականության միջև: Այն ամենը, ինչ կատարվել է անցյալում, իրականություն է, բայց Հիսուսը և Նրա Խոսքը Ճշմարտություն են: Ճշմարտությունն ավելին է, քան իրականությունը:

Թույլ տվեք բացատրել մեր քույրերից մեկի կյանքի օրինակով:

Այս քրոջ ամուսինը մահացավ և գնաց Տիրոջ մոտ: Այժմ նա Երկնքում է, և կինն այլևս չի տեսնելու նրան, մինչև որ ինքն էլ կգնա այնտեղ:

Սա ճշմարտություն է:

Բայց իրականությունն այն է, որ նրա կյանքն ավարտվեց« և հիմա կինը ոչինչ չունի, որ շարունակի ապրել: Սատանան կցան-

կանար, որ նա հավատար սրան, բայց սա ճշմարտությունը չէ:

Իրականությունն այն էր, որ երիտասարդ տղամարդը, ում հետ իմ աղջիկը նշանվել էր, խաբեց և խորապես վիրավորեց նրան: Բայց ճշմարտությունն այն է, որ նրա կյանքը չավարտվեց այդ հուսախաբությամբ: Նա մի ամբողջ կյանք ունի առջևում, և լցվում է Աստծո օրհնություններով:

Իրականությունն այն էր, որ նա կորցրեց իր սիրած ընկերոջը, բայց ճշմարտությունն այն է, որ նա ունի ապագա, հրաշալի քրիստոնեական ընտանիք, սեփական մեքենա, լավ աշխատանք, հոգատար ընկերներ և Աստծո սերը:

Այս կորուստը տեղի ունեցավ հենց իր ծննդյան օրը, երբ նա 19 տարեկան էր դառնում: Լավ նվեր է ծննդյան տոնի կապակցությամբ, այնպես չէ՞: Բայց տխրելու և դառնանալու փոխարեն, նա ճիշտ որոշում ընդունեց: Նա ասաց. «Վաղն իմ ծննդյան 19-րդ տարեդարձն է և իմ ապագա կյանքի առաջին օրը»:

Ես այնքան էի ցնցված նրա վերաբերմունքից և ապագայի հանդեպ վստահությունից, որ նրա համար փոքրիկ օրագիր գնեցի և ասացի. «Այս փոքրիկ գրքի մեջ գրի՛ր բոլոր հրաշքները, որ Աստված այս տարվա ըն-

թացքում կանի քո կյանքում, և 20 ամյակիդ դրանք կկարդանք և միասին կտոնենք»:

Այդպես էլ արեցինք:

Մենք էլ այսպես պետք է վարվենք մեր իրավիճակներում: Մենք այնքան զորություն չունենք՝ դեմ կանգնելու հուսախաբություններին, բայց ունենք իմացություն և ընտրություն կատարելու ուժ:

Մենք կարող ենք ապրել մեր մտքերով՝ մինչև լիովին կհուսահատվենք և կկործանվենք, բայց կարող ենք նաև մեր ուշադրությունը կենտրոնացնել այն բոլոր հրաշալի բաների վրա, որ կատարվել են մեր կյանքում, և այն բոլոր բարի բաների վրա, որ Աստված պահել է մեր գալիք օրերի համար:

## Հույս և սպասում

«Որ ճանաչեմ Նրան և Նրա հարության զորությունը և Նրա չարչարանքին մասնակից լինելը՝ Նրա մահվանը կերպարանակից լինելով»:

Փիլիպեցիների 3.10

Այս խոսքում Պողոսն ասում է, որ ինքն արել է մի բան, ինչը մենք բոլորս կարիք ունենք անելու. նա նպատա՛կ ուներ:

Մենք պետք է նպատակ, հույս, ուղղվածություն և սպասում ունենանք:

Երբ մարդիկ շարունակաբար խորը հիասթափություններ են ապրում, կորցնում են իրենց ուղղվածությունը և սպասումը, սկսում են վախենալ, հուսալ որևէ բանի կամ որևէ մեկին, սակայն կրկին հուսախաբվում են: Նրանք սկսում են վախենալ հուսախաբությունից և նախընտրում են չհավատալ, քան համարձակության դիմել:

Ամենատխուրն այն է, որ նրանք կյանքում դառնում են պարտվողներ, ոչ թե հաղթողներ, քանի որ հաղթանակը՝ համարձակությունից է:

## ՎԻՐԱՎՈՐՎԱԾՆԵՐԸ ԿԱՐԱԿԱԾ Է ԱՌԱՋԱԴԻՄՈՒՄ

«Որպեսզի մեռելների հարությանը հասնեմ»:

Փիլիպեցիների 3.11

Երբ աղջիկը տղայի կողմից մի քանի անգամ վիրավորվում է, սկսում է զգուշանալ և մտածել. «Ես երբեք չեմ վստահի որևէ մեկին»:

Սատանան հենց սա է ուզում:

Եվ երբ այսպես ենք վարվում, ուղղակի գտնվում ենք սատանայի ղեկավարության տակ:

Մի անգամ մեկն ասաց. «Եթե դու վիրավորվես, կսկսես կասկածել»:

Գուցե ճիշտ է, բայց դա նույնպես սատանայի խորամանկություններից է, որն օգտագործում է՝ մեզ խաբելու և Աստծուց մեզ տրված կյանքի նպատակից ետ պահելու:

Սատանան ցանկանում է, որ մենք կասկածամիտ լինենք:

Նա գործածում է մեր կյանքից մի քանի դեպքեր և համոզում է՝ չվստահել որևէ մեկին:

Եթե դու վիրավորվել ես, մի՛ մտածիր, որ այլևս չես կարող որևէ մեկին վստահել: Եթե այդպես մտածես, սատանային թույլ կտաս թալանել այն օրհնությունները, որ Աստված ունի քեզ համար:

Պողոս առաքյալն ուներ նպատակ՝ հոգևոր տեսիլք, որին ուզում էր հասնել: Եվ կարևոր չէ, թե ինչ կպատահեր իրեն. ոչինչ չէր ազդի իր վրա և ետ չէր պահի իրեն այս կյանքում լիարժեք ապրելուց, մինչև կկատարվեր Աստծուց իրեն տրված նպատակը:

Նպատակին հասնելու համար նա պետք է քայլ աներ: Նա պետք է վստահեր ոչ միայն Աստծուն, այլ նաև մարդկանց: Նա պետք է պատրաստ լիներ հանդիպելու ձախորդությունների ու կորուստների:

Մենք նույնպես պետք է անընդհատ առաջ շարժվենք դեպի մեր նպատակը՝ անկախ հարձակումներից:

## Առա՛ջ շարժվիր

«Ոչ թե արդեն հասել եմ կամ արդեն կատարյալ եմ, բայց հետևում եմ, որ հասնեմ նրան, ինչի համար էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնել եմ: Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առջևի լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում»:

Փիլիպեցիների 3.12-14

Պողոսը 12-րդ խոսքում ասում է, որ դեռ չի հասել իր նպատակին, ո՛չ էլ կատարյալ է դարձել, բայց նա չի պատրաստվում հրաժարվելու: Դրա փոխարեն առաջ է գնում:

Այս ընթացքը բաղկացած է երկու մասից. առաջին՝ մոռանալ ամեն բան, որ կատարվել է անցյալում, և երկրորդ՝ առաջ շարժվել դեպի ապագան:

Սա կարևոր դաս է, որ բոլորս պետք է սովորենք:

Պատկերացրե՛ք մի կնոջ, ով կորցրել է ամուսնուն: Երբ ասում ենք, որ նա պետք է մոռանա անցյալի կորուստը և առաջ շարժվի, մենք ամենևին խորհուրդ չենք տալիս, որ նա ամեն բան մոռանա իր ամուսնու մասին, երբեք չհիշի նրան: Մենք միայն ասում ենք, որ եթե նա իր միտքը կենտրոնացնի անցյալի վրա, կվտանգի իրեն: Նա կապրի անցյալով՝ ապագայի համար ապրելու փոխարեն:

Ես հիշում եմ մեր եկեղեցուց մի կնոջ, ում տղան մահացավ 16 տարեկանում: Բոլորս աղոթեցինք և հավատում էինք, որ Աստված կբժշկի նրան, բայց նա չապրեց: Սակայն այդ դժբախտության ժամանակ Տերը մխիթարեց և հաստատեց երիտասարդի մորը:

Մի օր նա լվացք էր անում, և երբ վերցրեց որդու վերնաշապիկը, որ փռի, չկարողացավ իրեն զսպել ու լաց եղավ: Հետո նա զգաց, թե ինչպես է ընկղմվում տրտմության մեջ: Հասկանալով, թե ինչ էր տեղի ունեցել իր հետ՝ նա սկսեց խոսել՝ Հիսուսի անունով: Վերցնելով որդու վերնաշապիկը՝ համարձակորեն ասաց. «Սատանա՛, նայի՛ր սրան: Ես սա օգտագործելու եմ որպես գովության պատմուճան: Ես չեմ խեղդվելու տրտմության մեջ. ես սկսելու եմ փառաբանել»:

Անցյալում պատահած դժբախտության համար տրտմելը շատ բնական է, բայց գոյություն ունի որոշակի սահման և ժամանակահատված: Մենք վաղ թե ուշ պետք է հոգնենք այդ տրտմությունից և որոշում կայացնենք դուրս գալ դրանից՝ շարունակելով մեր կյանքը:

Պողոսը սրա մասին է խոսում՝ մոռանալ հետին բաները և ապրել առջևում սպասվող բաների համար: Մենք կարող ենք այս սկզբունքը գործածել մեր ամբողջ կյանքի ընթացքում:

Եթե ցանկանում ենք հասնել այն ամենին, ինչի համար Աստված մեզ կանչել և օծել է, մենք էլ Պողոսի նման պետք է նպատակ ունենանք և շարունակենք ապրել այդ նպատակին հասնելու համար:

## ԵՍ ՆՈՐ ԲԱՆ ԵՄ ԱՆՈՒՄ

«Առաջինները մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտաբերեք. ահա Ես նոր բան եմ անում, որ հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա....»:

Եսայի 43.18,19

Մենք պետք է խուսափենք անցյալի տրտմությունը մեր մեջ կրելու վտանգից և ապրենք երախտագիտության ու սպասման

ակնկալիքով, որ առջևում դեռ շատ բաներ են մեզ սպասվում:

Իմ ծառայությունն սկսելու համար պետք է թողնեի՝ եկեղեցում կրտսեր հովվի իմ դիրքը: Դա շատ դժվար էր, և երկար ժամանակ տրտմած էի՝ եկեղեցու անդամների հետ իմ ընկերակցությունները կորցնելու պատճառով:

Ես պետք է թույլ տայի, որ իմ անցյալը հեռանար ինձնից, բայց միտքս և զգացմունքներս փորձում էին կառչել դրանից: Ի վերջո, հաղթանակ տարա: Ես ոգևորվեցի ապագայով: Բայց, միևնույն ժամանակ, հուսախաբված էի, և այդ հուսախաբությունն ազդում էր իմ նոր ծառայության վրա: Ինձ համար շատ դժվար ժամանակահատված էր, բայց այդ ընթացքում սովորեցի թողնել այն ամենը, ինչ անցյալում էր, և առաջ շարժվել:

Աստված կրկին հիշեցնում էր. «Դու պետք է թողնես այն ամենը, ինչ անցյալում է: Անցյալն այլևս քո կյանքը չէ: Հիմա ես նո՛ր բան եմ անում»:

## Ես Եմ

«Եվ Աստված ասաց Մովսեսին. «Ես եմ, Որ եմ»: Եվ ասաց. «Այսպես ասա Իսրայելի որդիներին. «Ինձ ԵՄ-ը ուղարկեց

ձեզ մոտ’»: Աստված նաև ասաց Մովսեսին. «Այսպե՛ս ասա Իսրայելի որդիներին. «Ձեր հայրերի Եհովա Աստվածը՝ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը, ինձ ձեզ մոտ ուղարկեց»»: Այս է Իմ անունը հավիտյան, և այս է Իմ հիշատակը ազգից՝ ազգ»:

Ելից 3.14,15

Եթե մենք շատ երկար ժամանակ կենտրոնանանք անցյալի վրա, դա մեզ վտանգի առջև կկանգնեցնի: Դրա համար Տերը ժամանակ առ ժամանակ հիշեցնում է, թե ով է Ինքը. Նա Մովսեսին և իսրայելացիներին ասաց՝ Ես Եմ..., և ոչ թե՝ Ես Էի...

Մենք պետք է հիշենք այն բոլոր բարի բաները, որ Աստված արել է մեզ համար անցյալում, ինչպես որ Նա արեց Աբրահամի, Իսահակի, Հակոբի և մյուս հավատարիմ մարդկանց և կանանց կյանքում: Բայց չպետք է տարված լինենք անցյալի ուրախություններով և հաղթանակներով, որպեսզի բաց չթողնենք այն ամենը, ինչ Աստված անում է մեզ համար ներկայում և ապագայում:

Հովհաննես 8.58-ում Հիսուսն ասաց. «...Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Աբ-

րահամի լինելուց առաջ եմ Ես»: Եբրայեցիներին ուղղված թղթի 13.8-ում ասվում է. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»:

Այսպիսին պետք է լինի մեր հավատքը՝ միշտ հավիտենական, անսահմանափակ և անփոփոխ ներկայում:

## ԵՏ ՄԻ՛ ՆԱՅԻՐ

«Հիսուսն էլ նրան ասաց. «Ով իր ձեռքը մաճի վրա է դնում և ետ նայում, հարմար չէ Աստծո արքայության համար»:

Ղուկաս 9.62

Աստված չի ուզում, որ մենք անցյալով ապրենք: Նա գիտի, որ եթե ետ գնանք և ամեն ինչ կրկին սկսենք, նույնը չի լինի, ինչ անցյալում էր: Որովհետև դա այն ժամանակ էր, իսկ հիմա ուրիշ է:

Երեկն անցավ: Սա ներկան է: Մենք ունենք ներկայի Աստված: Մենք ներկայի մարդիկ ենք և ներկայի կյանք պետք է վարենք ամեն օր:

Շատ հաճախ մարդիկ կորցնում են իրենց ուրախությունը, քանի որ անցյալում ունեին

մի բան, որ իրենց ուրախացնում էր, իսկ հիմա դա չկա: Շատերը հեռանում են Աստծո այս կամ այն շարժի հետ, որ կար, բայց հիմա չկա:

Դրա փոխարեն պետք է սովորենք ապրել ներկայով: Աստված հիմա էլ է շարժվում:

Եկեք ուրախանանք ներկայով:

Մենք պետք է անցյալը թողնենք և առաջ շարժվենք՝ նայելով, թե ինչ է անում Աստված մեր կյանքում այս պահին:

Փա՛ռք Աստծո, որ կարող ենք առաջ շարժվել՝ իմանալով, որ Նա ծրագիր ունի մեզ համար:

## Ե՞Տ ԴԱՐՁԻՐ ԿԱՄ ՇԱՐՈՒՆԱԿԻ՞Ր

«Որովհետև այսպիսի բաներ խոսողները հայտնի ցույց են տալիս, որ մի հայրենիք են որոնում: Եվ եթե այն էին հիշում, որտեղից դուրս եկան, ժամանակ ունեին ետ դառնալու: Բայց հիմա ավելի ազնիվին են ձգտում, այսինքն՝ երկնավորին, և դրա համար Աստված ամոթ չի համարում՝ նրանց Աստվածը կոչվելու, որովհետև մի քաղաք է պատրաստել նրանց համար»:

Եբրայեցիների 11.14-16

Այս խոսքը վերաբերում է իսրայելցիներին, որոնք դուրս էին եկել իրենց նախնական տնից, բայց իրենց նոր տուն հասնելու համար պետք է անցնեին մի քանի դժվար փորձություններով և ժամանակներով: Այստեղ ասվում է, որ եթե նրանք կարոտով հիշեին այն երկրի մասին, որտեղից դուրս էին եկել, հնարավորություն ունեին վերադառնալու այնտեղ: Սակայն նրանք փնտրում էին նոր երկիր, որն Աստված պատրաստել էր նրանց համար: Այսպիսով, նրանք առաջ էին գնում՝ արհամարհելով դժվարություններն ու փորձությունները:

Սա է այն ընտրությունը, որ մենք պետք է անենք: Մենք կարող ենք ետ նայել, բայց կարող ենք որոշել և նայել ապագային՝ մեծ ակնկալիքով:

Այս սուրբգրային խոսքը չի նշանակում, որ պետք է մոռանանք անցյալի դժվար ժամանակները կամ չհիշենք մեր սիրելիներին, որոնցից բաժանվել ենք: Սա նշանակում է, որ չպետք է մեր մտքերն ու սրտերը շարունակաբար ուղղենք անցյալին, հակառակ դեպքում բաց կթողնենք այն, ինչ Աստված ունի մեզ համար ապագայում:

Դրա համար պետք է ուխտ անենք, որ մեր կյանքը չվատնենք՝ նայելով անցյալին:

Մենք պետք է առաջ գնանք:

Սա այսօրվա պատգամ է և պետք է այսօր կատարենք:

Սովորաբար, ես այս խոսքը վերագրում էի միայն անցյալում ունեցած սխալներին և ձախորդություններին: Բայց մի օր հասկացա, որ ինքս ինձ թշվառացնում եմ՝ անդադար մտածելով իմ նախկին հաջողությունների և հաղթանակների մասին:

Երբ ինչ-որ բան է լինում և ավարտվում, պետք է թույլ տանք, որ վարագույրն իջնի, և նորը սկսվի: Չպետք է ներկայի սխալները համեմատել անցյալի սխալների հետ: Եթե այդպես վարվենք, բաց դուռ կունենանք հպարտության կամ հուսախաբության համար:

Դրա համար Տերը Եսայի 43.18,19-ում մեզ հորդորում է՝ չհիշել հետին բաները, ո՛չ էլ մտաբերել անցած բաները, որովհետև դրանք անցան: Աստված հիմա նո՛ր բան է անում, որն սփռվում է հենց մեր աչքի առջև: Մենք պետք է հասկանանք և ուշադիր լինենք, եթե ուզում ենք օգտվել դրանից:

## ԱՐՏԱՍՈՒՔՆԵՐՈՎ ՑԱՆԵԼ, և ՑՆԾՈՒԹՅՈՒՆՈՎ ՀՆՁԵԼ

> «Արտասուքով ցանողները ցնծությունով կհնձեն»:
>
> Սաղմոս 126.5

Կարևոր չէ, թե ինչ է պատահել մեզ հետ անցյալում, ո՛չ էլ՝ թե ինչ է պատահում ներկայում. մեր կյանքն ավարտված չէ: Եվ չպետք է թույլ տալ, որ սատանան մեզ հակառակը համոզի:

Մեր թշնամին կփորձի ասել, որ մի սխալից շատ սխալներ ծնվեցին, և հիմա շատ ուշ է մեզ համար:

Չպետք է լսել նրան: Դրա փոխարեն պետք է ասել. «Սատանա՛, դու ստախոս ես, և բոլոր ստերի հայրն ես: Այսօր նո՛ր օր է, և ես հրաշքի եմ սպասում»:

Մեր կյանքի ընթացքում հրաշքի սպասելու պատճառն այն է, որ չգիտենք, թե դա երբ կլինի, չգիտենք, թե Աստված երբ կանցնի մեր կողքով: Սա է, որ կյանքն այդքան հետաքրքիր է դարձնում:

Սատանան ցանկանում է, որ մտածենք, թե մեր ժամանակը երբեք չի գա, և հրաշք չի լինի: Բայց եթե մենք հաստատուն և կայուն

լինենք Հիսուս Քրիստոսի մեջ, մեր ժամանակը կգա, և հրաշքը տեղի կունենա:

Դրա համար Աստվածաշնչի միջոցով Աստված մեզ քաջալերում է՝ չհուսախաբվել, չհրաժարվել և չտկարանալ, որովհետև Նա գիտի, որ «....իրիկունը լաց է գալիս, իսկ առավոտը՝ ցնծություն» (Սաղմ. 30.5):

## ԱՍՏՎԱԾ ԿԱՎԱՐՏԻ ԻՐ ԳՈՐԾԸ

«Եվ հաստատ համոզված եմ, թե Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը»:

Փիլիպեցիների 1.6

Աստված երբեք կիսատ չի թողնի Իր սկսած գործը (տե՛ս Եբր.12.2): Նա է Սկիզբը և Վերջը:

Շատ հաճախ խնդիրը մեր մեջ է: Մենք թաղված ենք անցյալի մեջ և ուշադրություն չենք դարձնում այն նոր բաների վրա, որ Աստված անում է:

Այն, ինչ Աստված արեց մեզ համար երեկ, հրաշալի էր, բայց Նա ընդունակ է երկու անգամ ավելին անելու այսօր և վաղը:

Ինքներս պետք է որոշենք, թե որն ենք ընտրում՝ հի՞նը, թե՞ նորը:

## 6

# ՆՈՐ ԳԻՆԻՆ, ՆՈՐ ՏԻԿԵՐԸ

*«Մի առակ էլ ասաց նրանց, թե ոչ ոք մի նոր հանդերձի կարկատան հին հանդերձի վրա չի գցի, ապա թե ոչ՝ այն նորն էլ կպատռի, և հնի հետ չի միաբանվի այն կտորը, որ նորից է: Եվ ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի, ապա թե ոչ՝ նոր գինին տիկերը կպատռի: Ինքն էլ կթափվի, և տիկերն էլ կկորչեն: Այլ՝ նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի, և երկուսն էլ կպահվեն»:*

*Ղուկաս 5.36-38*

# 6

## ՆՈՐ ԳԻՆԻՆ, ՆՈՐ ՏԻԿԵՐԸ

Տերն ինձ նոր հասկացողություն տվեց՝ այս պատգամն ըմբռնելու: Սովորաբար, ես մտածում էի, որ այս պատգամն ավելի շատ վերաբերում է ոչ թե օրենքով, այլ շնորհքով փրկվելուն: Այժմ տեսնում եմ, որ սա վերաբերում է նոր ապրելաձևին, նոր մտածելակերպին և նրանց, ովքեր Հիսուս Քրիստոսում նոր արարածներ են դարձել:

Մենք միշտ նորն ենք ցանկանում, բայց պահում ենք հինը: Իսկ Հիսուսն ասաց, որ դա հնարավոր չէ: Իր ասածը բացատրելու համար Նա մի առակ է պատմում, որ չես կարող նոր կարկատանը հին հանդերձի վրա կարել:

Այս առակով Հիսուսն ասում է, որ չփորձենք նոր կյանքը կապել հին կյանքի հետ: Ճիշտ այնպես, ինչպես նոր գինին չեն լցնում հին տիկերի մեջ:

## Ո՞րն է լավագույնը

«Եվ ոչ ոք չկա, որ հինը խմի՝ շուտով նորը կամենա, որովհետև ասում է, թե հինը ավելի քաղցր է»:

Ղուկաս 5.39

Գիտե՞ք, թե մարդն ինչու է ասում, որ հին գինին ավելի լավն է, քան նորը: Որովհետև հինն ավելի հարմարավետ է, և այդ պատճառով մենք հին կյանքն ավելի ենք նախընտրում, քան նորը:

Տիրոջ հետ շարժվելու փոխարեն մենք փորձում ենք մնալ այնտեղ, որտեղ կանք, քանի որ դա անելը շատ ավելի հեշտ է, քան՝ առաջ գնալը:

Դժվար է տեղափոխվել մեկ այլ քաղաք, ունենալ նոր ընկերներ, գտնել նոր բժիշկ, նոր դպրոց, նոր եկեղեցի: (Շատ հաճախ նույնիսկ դժվարանում ենք կահույքը տեղափոխել մի տեղից՝ մեկ այլ տեղ): Շատ ավելի հեշտ է մնալ այնտեղ, որտեղ կանք, և ուրախ լինել այն բանի համար, որ ունենք և գիտենք:

Բայց մոռանում ենք, որ որպես քրիստոնյաներ՝ ինքներս նոր ստեղծվածներ ենք:

## ՆՈՐԸ ԱՍԿԱՎԵԼ Է

«Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, և ահա ամեն բան նոր եղավ»:

Բ Կորնթացիների 5.17

Մենք պետք է հասկանանք, որ նոր արարածներ ենք Հիսուս Քրիստոսում: Մենք կանչվել ենք նոր կյանքի: Չպետք է վախենալ թողնելուց այն ամենը, ինչ ունեինք անցյալում, որպեսզի վերցնենք այն, ինչ Աստված տվել է նոր կյանքում:

Ես սա հասկացա, երբ Տերը խոսեց ինձ հետ. «Ջո՛յս, չե՞ս հասկանում, որ սա է հիմքը իրական նոր արարածների՝ հներն անցան, և ամեն բան նոր եղավ»:

Սա ճշմարտություն է այն ժամանակ, երբ որոշում ենք կայացնում, և սա շարունակական է նոր կյանքի համար, երբ Հիսուս Քրիստոսում ենք:

## ԴՈՒՐՍ ԳԱԼ ՀՆԻՑ ԵՒ ՄՏՆԵԼ ՆՈՐԻ ՄԵՋ

«Որովհետև Աստված մեզ համար ավելի լավ բան նախապատրաստեց….»:

Եբրայեցիների 11.40

Երբ մենք ծառայության էինք մեկնում Հնդկաստան, որտեղ կենցաղային պայմանները սարսափելի էին, դրանք մեզ ավելի էին խանգարում, քան բնիկներին: Պատճառն այն էր, որ նրանք ոչինչ չունեին համեմատելու իրենց ապրելակերպի հետ: Այն, ինչ ունեին՝ միշտ են ունեցել:

Մենք ապրել էինք Ամերիկայում՝ լիության երկրում: Մեզ համար Հնդկաստանում ապրելու պայմանները սարսափելի էին՝ համեմատած այն պայմաններին, որ մենք միշտ ունեցել ենք:

Ուրեմն ի՞նչ՝ մշտապես ապրել հուսախաբ, ընկճված, տրտմած վիճակու՞մ, ապրել հին կյանքի համա՞ր, որը գոյություն չունի. մի՞թե սա է մեր նպատակը:

Մի՛ նստիր և մտածի՛ր հին բաների մասին:

Առա՛ջ գնա դեպի այն բաները, որոնք առջևում են:

Որքան մտածես քո հուսախաբությունների մասին, այնքան ավելի հուսախաբված կլինես: Եվ եթե երկար ժամանակ մնաս այդ վիճակում, կկործանվես, մեծ վտանգի առջև կկանգնես:

Բայց Աստված ավելի լավ բաներ ունի քեզ համար:

Սա նո՛ր օր է: Երբ հուսախաբությունը գալիս է, վերափոխվի՛ր: Վերափոխվի՛ր և կանգնի՛ր: Մոռացի՛ր անցյալում եղածը և առա՛ջ գնա՝ դեպի գալիք բաները:

Հիշի՛ր, որ Տերը նոր բան է անում քո կյանքում: Մոռացի՛ր անցյալը և ապրի՛ր այն նոր կյանքի լիակատար ուրախությամբ, որ Նա ծրագրել և պատրաստել է քեզ համար:

# Ամփոփում

«Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում, և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք»:

Եփեսացիների 3.17

Ես կոչ եմ անում ուշադրություն դարձնել, թե ում և ինչին եք ապավինում և վստահում:

Եփեսացիներին ուղղված թղթի 3.17-ում ասվում է, որ արմատ գցած և հաստատված լինենք սիրով: Մենք պետք է արմատ գցած և հաստատված լինենք Հիսուս Քրիստոսի սիրո մեջ, ոչ թե մարդկանց, երեխաների, ընկերների կամ աշխատանքի:

Հիսուսն է Ժայռը: Նա է այն ժայռը, որ երբեք չի շարժվելու:

Եթե քո արմատները Ժայռի վրա հաստատված լինեն, երբ փոքր հուսախաբություններ գան, դու ընդունակ կլինես հաղթահարելու և շարունակելու քո կյանքը: Երբ մեծ հուսախաբությունները գան, Տերը կարող է բժշկել քո զգացմունքները« և Նրա զորությամբ նոր որոշումներ կկայացնես:

Եթե դու արմատավորված և հաստատված լինես մեկ այլ բանի վրա, ի վերջո կհուսախաբվես, կհուսալքվես և կկործանվես, որովհետև ոչինչ հաստատուն չէ՝ ինչպես ժայռը, հաստատուն է միայն Հիսուսը:

Սովորի՛ր վերափոխվել և կանգնել: Դու կարո՛ղ ես դա անել:

Մեծ առավելություն է վերափոխվելը, մարդկանց և իրավիճակների հանդեպ ուղղվելը:

Մի՛ խորհիր հուսախաբությունների շուրջ: Թո՛ւյլ տուր, որ դրանք հեռանան, և Աստված հոգա քո մասին: Հուսախաբությանը դեմ կանգնիր հենց սկզբից և վճռակա՛ն եղիր որևէ վերափոխում կատարելիս:

Քո խնդիրների վրա կենտրոնանալու և հուսախաբվելու փոխարեն՝ կենտրոնացի՛ր Աստծո վրա: Խորհրդածի՛ր Նրա խոստումների շուրջ: Դավանի՛ր Նրա Խոսքը: Քո անձը և կյանքիդ իրավիճակները աղոթքով հանձնի՛ր Նրան:

Քո ցուցակում գրանցի՛ր ոչ միայն այն, թե ինչ ես կորցրել, այլ նաև՝ թե ինչ ես ձեռք բերել: Սա քո միտքն ուղղում է այնտեղ, որտեղ Աստված է: Հիշի՛ր՝ Հիսուսն Իր մասին ասաց. «Ես Եմ…», և ոչ թե «Ես Էի…» կամ «Ես Կլինեմ…»: Նա հիմա այստեղ է՝ քեզ համար: Այսօրվանից դու կարող ես զվարճանալ քո կյանքով:

# Մաս 2

# ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԽՈՍՔԵՐ

# ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԽՈՍՔԵՐ՝ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅՈՒՆԸ

«Իսկ եթե ես հաստատ չհավատայի, որ Տիրոջ բարությունը կտեսնեմ կենդանյաց երկրում ...Սպասի՛ր Տիրոջը, թող սիրտդ պինդ և զորավոր լինի, և սպասի՛ր Տիրոջը»:

Սաղմոս 27.13,14

«Ամեն կատարյալ բանի վերջը տեսա. Քո պատվիրանը շա՜տ լայնարձակ է»:

Սաղմոս 119.96

«Կոտրած ատամ և դյուրագլոր ոտք է՝ նեղ օրը անհավատարիմ մարդուն ապավինելը»:

Առակաց 25.19

«Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը»:

Երեմիա 29.11

«Բայց ես Տիրոջը կսպասեմ և կհուսամ իմ փրկության Աստծուն. ինձ պիտի լսի իմ Աստվածը»:

Միքիա 7.7

«Իրար հանդեպ միևնույն խորհուրդը ունեցեք. բարձր բաներ մի՛ խորհեք, այլ՝ խոնարհների հետ խոնարհվե՛ք, ձեր անձերում իմաստուն մի՛ եղեք»:

Հռոմեացիների 12.16

«Ձեր անձերի համար վրեժխնդրություն մի՛ արեք, սիրելինե՛ր, այլ՝ բարկության տեղ տվե՛ք, որովհետև գրված է՝ վրեժխնդրությունն Իմն է…»:

Հռոմեացիների 12.19

«Հավատարիմ է Աստված, Ում ձեռքով կանչվեցիք Նրա Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հաղորդությանը»:

Ա Կորնթացիների. 1.9

«Այլ՝ ինչպես գրված է՝ ինչ որ աչք չտեսավ և ականջ չլսեց և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար»:

Ա Կորնթացիների 2.9

«Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում, և Իր գիտության հոտը մեզանով հայտնվում է ամեն տեղ»:

Բ Կորնթացիների 2.14

«Եվ չձանձրանանք բարին գործելուց, որովհետև ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք»:

Գաղատացիների 6.9

«Մեզ սկզբից սահմանելով, որ Իրեն որդեգիր լինենք Հիսուս Քրիստոսի ձեռքով՝ Իր կամքի հաճության պես: Իր փառավոր շնորհքի գովասանքի համար, որ Նրանով շնորհք ցույց տվեց մեզ այն Սիրելիով»:

Եփեսացիների 1.5,6

«Բայց Նրան, որ կարող է առատությամբ անել բոլոր բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է»:

Եփեսացիների 3.20

«Բայց դուք, եղբայրնե՛ր, մի՛ ձանձրացեք բարին գործելուց»:

Բ Թեսաղոնիկեցիների 3.13

# ԱՂՈԹՔ՝ ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հա՛յր, Քո Խոսքը լույս է իմ ճանապարհին:

Խնդրո՛ւմ եմ, պահի՛ր ինձ, որ իմ հույսն ու սպասումներն ինձ նման մարդկանց վրա չդնեմ, քանի որ բոլորս էլ ընդունակ ենք հուսախաբվելու և հուսախաբ անելու:

Օգնի՛ր ինձ, որ կարողանամ ներել նրանց, ովքեր ինձ վիրավորել են անցյալում, և թողնել այդ հուսախաբությունների ցավոտ հիշողությունները:

Ներգործի՛ր իմ մեջ, Տե՛ր, որպեսզի ես ավելի ու ավելի նմանվեմ Քեզ:

Այս ամենը խնդրում եմ Հիսուսի Սո՛ւրբ անունով: Ամե՛ն:

# ԱՂՈԹՔ՝ ԱՍՏԾՈ ՀԵՏ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք երբեք չեք հրավիրել Հիսուսին՝ Խաղաղության Իշխանին, որ դառնա ձեր Տերը և Փրկիչը, ձեզ հորդորում եմ, որ դա անեք հիմա: Աղոթե՛ք հետևյալ աղոթքը, և եթե իսկապես անկեղծ եք, նոր կյանք կսկսեք՝ Քրիստոսով:

Հա՛յր, Դու այնպես սիրեցիր աշխարհը, որ տվեցիր Քո Միածին Որդուն՝ մեռնելու մեր մեղքերի համար, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա: Քո Խոսքն ասում է, որ մենք փրկված ենք շնորհքով՝ հավատքի միջոցով, և դա Քո պարգևն է: Մենք ոչինչ չենք կարող անել փրկությունը վաստակելու համար:

Ես հավատում և դավանում եմ, որ Հիսուս Քրիստոսը Քո Որդին է՝ աշխարհի Փրկիչը: Հավատում եմ, որ Նա վերցրեց իմ բոլոր մեղքերը, մահացավ խաչափայտին ինձ համար՝ վճարելով մեղքերիս գինը: Հա՛յր, ես

հավատում եմ, որ Դու Հիսուսին հարություն տվեցիր մեռելներից:

Խնդրո՛ւմ եմ, որ ներես իմ մեղքերը: Ես դավանում եմ Հիսուսին որպես իմ Տեր: Ըստ Քո Խոսքի՝ ես փրկված եմ և հավիտենությունը կապրեմ Քեզ հետ: Շնորհակալություն, Հա՛յր: Ես երախտապարտ եմ Քեզ՝ Հիսուսի անունով, ամե՛ն:

Ուշադրություն դարձրեք հետևյալ խոսքերին՝ Հովհաննես 3.16, Եփեսացիների 2.8,9, Հռոմեացիների 10.9,10, Ա Կորնթացիների 15.3,4, Ա Հովհաննես 1.9, 4.14-16, 5.1,12,13:

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

**Ջոյս Մայերն** Աստծո Խոսքն ուսուցանում է դեռևս 1976 թվականից և ամբողջական ծառայության է անցել 1980 թվականից: Որպես հովվի գործակից «Կյանք» Քրիստոնեական կենտրոնում, որը գտնվում է Միսսուրիի Լյուիս քաղաքում, նա զարգացրել, կոորդինացրել և սովորեցրել է «Կյանք՝ Խոսքի մեջ» անվանումով շաբաթական հավաքույթներում: Հինգ տարի անց Աստված այդ աշխատանքն ավարտին է մոտեցնում՝ առաջնորդելով նրան հաստատելու իր անձնական ծառայությունը և այն կոչելու «Կյանք՝ Խոսքի մեջ» անունով:

Ջոյսի «Կյանք՝ Խոսքի մեջ» ռադիոհաղորդումը հեռարձակվում է ավելի քան 250 ազգային ռադիոկայաններով: 1993 թվականին հեռարձակվեց «Կյանք՝ Խոսքի մեջ՝ Ջոյս Մայերի հետ» 30 րոպեանոց հեռուստածրագիրը, որը տարածվեց ամբողջ Միացյալ Նահանգներով, ինչպես նաև մի քանի արտասահմանյան երկրներով: Նրա ուսուցողական տեսահոլովակներից օգտվում են շատ երկրներում: Նա հաճախ է ճամփորդում՝ ուսուցանելով

«Կյանք՝ Խոսքի մեջ» խորագրով կոնֆերանսների ընթացքում՝ հանդես գալով տեղական եկեղեցիներում: Ջոյսը և ամուսինը՝ Դեյվը, ով «Կյանք՝ Խոսքի մեջ» ծառայության ֆինանսների կառավարիչն է, ամուսնացել են ավելի քան 31 տարի առաջ և ունեն չորս երեխա: Երեքն ամուսնացած են, իսկ կրտսեր որդին ներկայումս իրենց հետ ապրում է Ֆենտոնում, Միսուրիի Լյուիս քաղաքի արվարձանների մոտ:

Ջոյսը հավատում է, որ իր կյանքի կոչումը՝ հավատացյալներին Աստծո Խոսքի մեջ հաստատելն է: Նա ասում է. «Հիսուսը մահացավ, որ ազատի գերիներին, բայց կան քրիստոնյաներ, որոնք շատ քիչ հաղթություններ ունեն կյանքում, կամ էլ, առհասարակ, չունեն»: Շատ տարիներ առաջ իրեն հայտնաբերելով նույն իրավիճակում և Աստծո Խոսքը կիրառելով՝ նա ձեռք է բերում ազատություն: Ապրելով հաղթության կյանք՝ Ջոյսը սպառազինվում է՝ գերիներին ազատելու և «մոխրի փոխարեն փառք» բերելու:

Ջոյսը շնչավոր բժշկության վերաբերյալ և դրա հետ կապված թեմաներով ուսուցանել է տարբեր երկրներում՝ օգնելով հազարավոր մարդկանց: Նա ձայնագրել է ավելի քան 165 տարբեր ձայներիզների ալբոմ, և հեղինակ է

25 գրքերի, որոնք արժեքավոր են Քրիստոսի մարմնի համար: Նրա «Շնչավոր բժշկության ձևավորում»-ը ունի 23 ուսուցման ժամեր: Այս ծրագրում ներկայացնում է հետևյալ նյութերը՝ «Վստահություն», «Մոխրի տեղ՝ փառք» (ներառում է ծրագիր), «Ղեկավարել զգացմունքները», «Վրդովմունք, վիրավորվածություն և աններողամտություն», «Մերժվածության արմատը» և «Բժշկել սրտով կոտրվածներին» 90 րոպեանոց աստվածաշնչյան խոսքերից կազմված ձայնասկավառակը:

Ջոյսի «Մտքի ձևավորում» գիրքը նկարագրում է մտքի թեմային նվիրված հինգ տարբեր ձայներիզային քարոզչություններ, որոնք ներառում են «Մտավոր ամրոցներ և մտածողություններ», «Անապատային մտածողություն», «Մարմնավոր միտք», «Անհանգստություն և մտահոգված միտք», «Միտք, բերան, տրամադրություն և դիրք» թեմաները: Փաթեթը նաև պարունակում է Ջոյսի «Միտքը կռվի դաշտն է» 260 էջանոց հզոր գիրքը: Նա ունի սիրո թեմային նվիրված երկու տեսաժապավենային քարոզչություն՝ «Սերը՝ ...» և «Սերը՝ որպես բարձրագույն զորություն» վերնագրերով:

Գրեք Ջոյս Մայերի աշխատասենյակ՝ նյութերի, կատալոգների և մանրամասն տեղեկությունների համար, եթե ձեզ հետաքրքրում է, թե ինչպես ձեռք բերել այն տեսաժապավենները, որոնց կարիքն ունեք՝ ձեր կյանքում կատարյալ բժշկություն բերելու համար: